ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.08.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/63

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի տնօրեն

Հ. Մանուչարյանի (պետական գրանցման վկայական թիվ 443.120.10618),

լիազորված ներկայացուցիչ Հ. Հարությունյանի (լիազորագիր՝ տրված 20.07.2020թ.),

քննելով ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար դերձակի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից 16.07.2020թ. ներկայացված (17.07.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/63 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 16.07.2020թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«1) ՀՀ պաշտպանության նախարարության /այսուհետև նաև՝ Պատվիրատու/ կարիքների համար «Դերձակի ծառայություններ /կոստյում բամբակյա կեպիով/» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցում /այսուհետև նաև՝ Ընթացակարգ/:

Սահմանված ժամկետում www.armeps.am կայքի միջոցով, ի թիվս այլ մասնակիցների, էլեկտրոնային հայտ է ներկայացրել նաև «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական միավորում» ՓԲԸ-ն:

2) 30.03.2020թ. հայտերի բացման նիստում գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական միավորում» ՓԲԸ-ի հայտում բացակայում է մասնակցի կողմից ներկայացվելիք փաստաթղթերը, այդ թվում գնային առաջարկը, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները, որոշեց «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական միավորում» ՓԲԸ-ի հայտը գնահատել անբավարար /անհամապատասխան/ սույն ընթացակարգի հրավերի պահանջներին և մերժել նրա հայտը:

Անհրաժեշտ է նշել, որ մուտք գործելով www.armeps.am կայք և ուսումնասիրելով վերը նշված ծածկագրով ընթացակարգի կարգավիճակը, նկատելի է այն հանգամանքը, որ «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական միավորում» ՓԲԸ-ի անվան կողքին «հայտ» անվանումով սյունակում առկա է ZIP անվանումով ֆայլը, որը ներբեռնելուց հետո պարզվում է, որ վերոհիշյալ ֆայլը դատարկ է, այսինքն հայտում բացակայում են կցված փաստաթղթերը:

Մինչդեռ, www.armeps.am համակարգում տվյալ ընթացակարգով ՍՊԸ-ի հայտի ուսումնասիրությունը վկայում է, որ գնային առաջարկը ներբեռնված է, սակայն, անհասկանալի պատճառներով այն փաստացի բացակայում է:

Մասնավորապես, հայտի փաթեթի «openproject» XML Document ուսումասիրությունից պարզ է դառնում, որ հայտի փաթեթում ՍՊԸ-ի կողմից ներբեռնվել է թե՛ Հավելված 1, և թե՛ Հավելված 2՝ գնային առաջարկը:

3) Նշված որոշումը բողոքարկվել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, ինչի արդյունքում 10.06.2020 թվականի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշմամբ բողոքը բավարարվել է, ինչի արդյունքում որոշվել է.«պարտավորեցնել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10 ծածկագրով գնանշման հարցման ընթակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել ՀՀ ՊՆ կարիքների համար դերձակի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Արցախ կարի կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը»:

4) ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի 19.06.2020 թվականի նիստի թիվ 4 արձանագրությամբ հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10 ծածկագրով ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող հայտարարել «Արցախ Կարի Կոշիկի Արտադրական միավորում» ՓԲԸ-ին»:

5) «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հայցադիմում՝ պահանջելով անվավեր ճանաչել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը: Նշված հայցն ընդունվել է վարույթ և միաժամանակ կիրառվել է հայցի ապահովման միջոցներ: Մասնավորապես, Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 23.06.2020 թվականի որոշմամբ դատարանը որոշել է.«պարտավորեցնել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանին կասեցնել 10.06.2020 թվականի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշումից բխող գործողությունների կատարումը՝ մինչև նույն գործով եզրափակիչ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Արգելել ՀՀ պաշտպանության նախարարությանը կատարել որևէ գործողություն՝ ուղղված ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի 10.06.2020 թվականի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշման կատարմանը»:

6) «Գեվգրուպ» ՍՊԸ-ն 24.06.2020 թվականին գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել բողոք, որով վերջինս խնդրել է պարտավորեցնել հանձնաժողովին՝ կայացնել համապատասխան որոշում՝ բոլոր մասնակիցներին գների նվազեցման բանակցությունների հրավիրելու վերաբերյալ, ինչը գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 08.07.2020 թվականի որոշմամբ մերժվել է:

7) ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի 14.07.2020 թվականի նիստի թիվ 5 արձանագրությամբ հանձնաժողովը, հիմքում դնելով այն հանգամանքը, որ առկա է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 23.06.2020 թվականի թիվ ԵԴ/17845/02/20 «Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին» որոշումը, որոշեց ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10 ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակից հայտարարել՝

1. «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին՝ թիվ 1 չափաբաժնի պահով,

2. «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ին՝ թիվ 2 չափաբաժնի մասով:

Գտնում եմ, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի 14.07.2020 թվականի նիստի թիվ 5 որոշումը խախտում է ինչպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի, այնպես նաև գնումների ողջ գործընթացի տրամաբանությունը:

(I) Մասնավորապես, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 10.06.2020 թվականի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշմամբ որոշվել է.«պարտավորեցնել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10 ծածկագրով գնանշման հարցման ընթակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել ՀՀ ՊՆ կարիքների համար դերձակի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Արցախ կարի կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը»:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի 19.06.2020 թվականի նիստի թիվ 4 արձանագրությամբ հանձնաժողովը որոշել է ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10 ծածկագրով ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող հայտարարել «Արցախ Կարի Կոշիկի Արտադրական միավորում» ՓԲԸ-ին»:

Նշված որոշմամբ ամրագրված պահանջն արդեն իսկ 19.06.2020 թվականի դրությամբ համարվել է կատարված, հետևաբար նաև՝ դրա պահանջն ավարտված, մինչդեռ դրա կայացումից միայն 4 օր անց է դատարանի որոշմամբ կիրառվել հայցի ապահովման միջոց:

Ըստ էության հայցի ապահովման միջոցի կիրառման պահին արդեն իսկ այդ որոշման պահանջը վերջնականապես կատարված է եղել և բացակայել է հայցի ապահովման միջոց կիրառելու օրենքով նախատեսված դեպքը:

(II) Չնայած նշվածին՝ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի 14.07.2020 թվականի նիստի թիվ 5 արձանագրությամբ հանձնաժողովը, հիմքում դնելով այն հանգամանքը, որ առկա է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 23.06.2020 թվականի թիվ ԵԴ/17845/02/20 «Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին» որոշումը, որոշել է ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10 ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակից հայտարարել՝

1. «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին՝ թիվ 1 չափաբաժնի պահով,

2. «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ին՝ թիվ 2 չափաբաժնի մասով:

Տվյալ բողոքի փաստերը բաժնում տեղ գտած հանգամանքները ինքնին խոսում են այն մասին, որ այս որոշումը ակնհայտ անհիմն է և կրկին չի տեղավորվում որևէ իրավական տրամաբանության մեջ: Մասնավորապես, Հանձնաժողովը, անտեսելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջները, Դատարանի՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշման արդեն իսկ՝ առարկայազուրկ լինելու հանգամանքը, դրսևորելով ակնհայտ կողմնակալություն, որոշել է թվով 2 չափաբաժիններով հաղթող ճանաչել ոչ 1-ին տեղը զբաղեցնող մասնակցին:

Ամեն դեպքում, ակնհայտ է նաև, որ «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն 24.06.2020 թվականին գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել բողոք, որով վերջինս խնդրել է պարտավորեցնել հանձնաժողովին՝ կայացնել համապատասխան որոշում՝ բոլոր մասնակիցներին գների նվազեցման բանակցությունների հրավիրելու վերաբերյալ, ինչը գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 08.07.2020 թվականի որոշմամբ մերժվել է, իսկ դատական պաշտպանություն հայցել է միայն «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ն: Այս պայմաններում, եթե ընդունել, որ հայցի ապահովում կիրառելու որոշումը առարկայազուրկ չի եղել, ապա այն կարող է կիրառվել միայն թիվ 2 չափաբաժնի մասով, բայց ոչ երբևէ թիվ 1 չափաբաժնի մասով առնվազն այն հիմքով, որ «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն ոչ միայն դատական պաշտպանության չի դիմել, դեռ մի բան էլ ավելին՝ իր բողոքը մերժվել է գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 08.07.2020 թվականի որոշմամբ:

Ընդ որում, Հանձնաժողովի այս որոշման ուժի մեջ մնալու դեպքում էական վնաս է պատճառվում նաև պետական շահին և պետական միջոցներին և ստացվում է, որ պետական գերատեսչությունը անհարկի կերպով վատնում է պետական միջոցներ, քանի որ ի սկզբանե հաղթող ճանաչված «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական միավորում» ՓԲԸ-ն առաջարկել էր ամենացածր գինը, այնինչ Հանձնաժողովը որոշել է գնումներ կատարել առավել թանկ գին առաջարկած ընկերություններից: Ընդհանուր առմամբ գնային տարբերությունը կազմում է 9 636 000 ՀՀ դրամ: 1-ին չափաբաժնի մասով՝ տարբերություն կազմում է 5 700 000 ՀՀ դրամ, իսկ 2-րդ չափաբաժնի մասով՝ 3 936 000 ՀՀ դրամ: Արդյունքում պետությունը տուժում է Հանձնաժողովի ոչ իրավաչափ գործունեության արդյունքում գրեթե 9 636 000 ՀՀ դրամի չափով:

(III) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման…:

Վերը նշված խախտումների փունջը հիմնավորում է այս գործընթացի ոչ օրինական լինելու հանգամանքը»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին վերացնել 14.07.2020թ. թիվ 5 որոշումը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 24.07.2020թ. ժամը 10:00-ին, 30.07.2020թ. ժամը 10:00-ին և 04.08.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

Ինչպես նաև բողոքի քննության նպատակով 04.08.2020թ. հրավիրված նիստին Ընկերության ներկայացուցիչը, իր հերթին պնդելով բողոքով ներկայացված դիրքորոշումը, միևնույն ժամանակ նշել է, որ «Մետաքսկոմբինատ» ՍՊ և «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊ ընկերություններն, իրենց հերթին առանձին հայցեր ներկայացնելով դատարան, փորձել են ամեն կերպ անհնարին դարձնել Գնումների հետ կապված բողոքներ անձի որոշման

արդյունքում վրա հասնող հետևանքների ծագումը, փորձելով արհեստականորեն հայցի ապահովման միջոց կիրառելով՝ խաթարել այդ ողջ գործընթացը, հետագայում ուժի մեջ մտած դատարանի որոշմամբ վերացվել է դատարանի կողմից կիրառված հայցի ապահովման միջոցը, ինչն իր հերթին ենթադրում է, որ այս գործի շրջանակներում վիճարկվող որոշման պահանջն արդեն իսկ պետք է ի կատար ածել, և ամփոփելով՝ Ընկերությունը ևս մեկ անգամ խնդրել է պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին վերացնել 14.07.2020թ. թիվ 5 որոշումը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 21.07.2020թ. թիվ ՊՆ/Պն/02/2267-2020 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել «Արցախ Կարի Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲ, «ԳԵՎԳՐՈՒՊ» և «Մետաքսկոմբինատ» ՍՊ ընկերությունները: Ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված եղել 30.03.2020թ. ժամը 11:00-ն:

Քանի որ «Արցախ Կարի Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ հայտում՝ armeps.am համակարգում բացակայել են վերջինիս կողմից ներկայացվելիք փաստաթղթերը, այդ թվում գնային առաջարկը, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հնարավորություն չի ունեցել գնահատելու մասնակցի հայտը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.2 կետի պահանջները՝ որոշում է կայացրել «Արցախ Կարի Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ հայտը գնահատել անբավարար (անհամապատասխան) Ընթացակարգի հրավերի պահանջներին և մերժել այն:

Հայտերի գնահատման արդյունքում Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող են գնահատվել «ԳԵՎԳՐՈՒՊ» և «Մետաքսկոմբինատ» ՍՊ

ընկերությունների հայտերը, համապատասխանաբար՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով, և քանի որ նշված չափաբաժինների մասով հրավերի պայմաններին համապատասխանող ոչ գնային պայմանները բավարարող գնահատված գնային առաջարկ ներկայացրած մասնակիցները միակն են եղել, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները, որոշել է նիստը կասեցնել և 09.04.2020թ. մասնակիցներին ծանուցել, որ գների նվազեցման նպատակով 14.04.2020թ. ժամը 12:30-ին ՀՀ ՊՆ ԳԿ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպվելու են բանակցություններ:

Բանակցություններին ներկայացել է միայն «Մետաքսկոմբինատ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը և նվազեցրել կազմակերպության կողմից ներկայացված գնային առաջարկը: «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը չի ներկայացել բանակցություններին:

15.04.2020թ.՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է ներկայացված գնային առաջարկների հիման վրա Ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակիցներից ընտրված մասնակիցներ հայտարարել՝

1) «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը՝ թիվ 1 չափաբաժնի մասով,

2) «Մետաքսկոմբինատ» ՍՊ ընկերությանը՝ թիվ 2 չափաբաժնի մասով:

17.04.2020թ «Արցախ Կարի Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ բողոքարկել է Ընթացակարգի 3-րդ արձանագրության 2.2 կետով՝ «Արցախ Կարի Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ հայտը մերժելու Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումը, որը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 10.06.2020թ. /հրապարակված՝ 12.06.2020թ./ թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշմամբ բավարարվել է:

19.06.2020թ.՝ հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 10.06.2020թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշումը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է դադարեցնել 30.03.2020թ. թիվ 3-րդ արձանագրության 2.2 կետի որոշումը:

19.06.2020թ. հայտերի գնահատման արդյունքում Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող են գնահատվել «ԳԵՎԳՐՈՒՊ»,

«Մետաքսկոմբինատ» ՍՊ և «Արցախ Կարի Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲ ընկերությունների հայտերը: Քանի որ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.4 կետի համաձայն ընտրված մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, ուստի ներկայացված գնային առաջարկների հիման վրա Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընթացակարգի հրավերի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Արցախ Կարի Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲ ընկերությունը:

18.06.2020թ. «Մետաքսկոմբինատ» ՍՊ ընկերությունը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան ՝ խնդրելով անվավեր ճանաչել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի 10.06.2020թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշումը: Հայցադիմումին կից ներկայացվել է նաև հայցի ապահովման միջոցներ կիրառելու միջնորդություն.

. կասեցնել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի 10.06.2020թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշման կատարումը՝ մինչև սույն քաղաքացիական գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը,

. արգելել ՀՀ պաշտպանության նախարարությանը կատարել որևէ գործողություն՝ ուղղված ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի 10.06.2020թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշման կատարմանը:

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քննության առնելով թիվ ԵԴ/17845/02/20 քաղաքացիական գործով հայցի ապահովման միջոց կիրառելու մասին «Մետաքսկոմբինատ» ՍՊ ընկերության միջնորդությունը, 23.06.2020թ. որոշել է.

. «Մետաքսկոմբինատ» ՍՊ ընկերության միջնորդությունը՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին բավարարել:

. Պարտավորեցնել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանին կասեցնել 10.06.2020թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշումից բխող գործողությունների կատարումը՝ մինչև թիվ ԵԴ/17845/02/20 քաղաքացիական գործով եզրափակիչ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

- արգելել ՀՀ պաշտպանության նախարարությանը կատարել որևէ գործողություն՝ ուղղված ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի 10.06.2020թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշման կատարմանը:

Դատարանի որոշման արդյունքում արգելվել է ՀՀ պաշտպանության նախարարությանը կատարել որևէ գործողություն՝ ուղղված.

. ընթացակարգի հանձնաժողովի՝ 30.03.2020թ. թիվ 3-րդ արձանագրության 2.2 կետի՝ «Արցախ Կարի Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲ ընկերության հայտը մերժելու որոշման դադարեցմանը,

. ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետի եզրակացությամբ տրամադրված «Արցախ Կարի Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ կողմից Ընթացակարգին հայտ ներկայացնելու նպատակով հայտերի նախապատրաստման համակարգ մուտքագրված փաստաթղթերի լուսապատճենները քննարկելուն:

Առկա հանգամանքներով պայմանավորված ՝ «Արցախ Կարի Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲ ընկերության հայտը հանձնաժողովի կողմից չի կարող դիտարկվել որպես հետագա գնահատման համար ընդունելի:

Հիմք ընդունելով ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 23.06.2020թ. թիվ ԵԴ/17845/02/20 Քաղաքացիական գործով հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշումը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 14.07.2020թ. որոշել է դադարեցնել իր կողմից 19.06.2020թ. կայացրած «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով ընթացակարգում 30.03.2020թ. թիվ 3-րդ արձանագրության 2.2 կետի որոշումը դադարեցնելու մասին» որոշումը:

Շարունակելով Ընթացակարգը՝ գնահատող հանձնաժողովը 14.07.2020թ. որոշել է Ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակիցներից ընտրված մասնակից հայտարարել՝

- «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը՝ Ընթացակարգի թիվ 1 չափաբաժնի մասով,

- «Մետաքսկոմբինատ» ՍՊ ընկերությանը՝ Ընթացակարգի թիվ 2 չափաբաժնի մասով:

Գնահատող հանձնաժողովը որոշել է հրապարակել Ընթացակարգի նիստի արդյունքները:

Գնահատող հանձնաժողովը որոշել է հաստատել Ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

Գնահատող հանձնաժողովը որոշել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 24.07.2020թ. ժամը 10:00-ին, 30.07.2020թ. ժամը 10:00-ին և 04.08.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստերին:

3.<u>«Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի կողմից 23.07.2020թ. գրությամբ ներկայացվել է միջնորդություն՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/63 բողոքով իրեն որպես երրորդ կողմ ներգրավելու վերաբերյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից միջնորդությունը բավարարվել է:

«Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ն 03.08.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր կողմից է քննվում «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ–ի 16.07.2020թ. ներկայացված ԳԲՔԱ-ՆԳ-2020/63 բողոքը:

Գտնում ենք, որ նշված բողոքը անհիմն է և ենթակա է մերժման:

Այսպես, «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ –ի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակում 16.07.2020թ. ներկայացված բողոքով վիճարկվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ընթացակարգի հանձնաժողովի կողմից Դատարանի կողմից թիվ ԵԴ/17845/02/20 քաղաքացիական գործով 23.06.2020թ. «Հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» որոշման արդյունքում գնահատող հանձնաժողովի «ԳԵՎԳՐՈԻՊ» ՍՊԸ-ի և «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Գտնում ենք, որ «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից 16.07.2020թ. ներկայացված բողոքը չի համապատասխանել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածով բողոքին ներկայացվող պահանջներին, մասնավորապես՝ բողոքում բացակայել է իրավական հիմքը, մինչդեռ նման պայմաններում նշված բողոքը

բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանն ընդունել է վարույթ և 24.07.2020թ. նշանակել բողոքի քննության նիստ:

Մինչդեռ, ակնհայտ է, որ վերոհիշյալ բողոքը չպետք է ընդունվեր վարույթ, կամ առնվազն, Գրիգոր Ներսիսյանը պետք է ինքնաբացարկ հայտներ՝ հաշվի առնելով նրա կաշկանդվածությունը տվյալ ընթացակարգով 10.06.2020թ. կայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշմամբ և թիվ ԵԴ/17845/02/20 քաղաքացիական գործով 25.06.2020թ. ներկայացված միջնորդությամբ, ինչը, սակայն, տեղի չի ունեցել:

Ավելին, 30.07.2020 թ. «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից ներկայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/63 բողոքի քննության նիստի ժամանակ բողոքներ քննող անձը բանավոր, ընդամենը մեկ տող հիմնավորմամբ մերժեց «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի բացարկի միջնորդությունը և հայտնեց, որ պարտավոր չէ այդ որոշումը կայացնել գրավոր: Մինչդեռ, «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի բացարկի միջնորդությունը կազմված էր 7 էջից և բազմաթիվ հիմնավորումներից, որոնց պատասխանը կամ հակափաստարկները «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ն այդպես էլ չստացավ, ինչը ՍՊԸ-ի կարծիքով ևս մեկ անգամ ապացուցում է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ.Ներսիսյանի սուբյեկտիվ և կանխյալ վերաբերմունքը:

Ակնհայտ է, որ բողոքը պետք է բավարարվի, եթե արձանագրվի գնումների մասին ՀՀ օրենսդրության կոնկրետ պահանջների խախտում, մինչդեռ բողոքում ընդամենը վերացական նշվել է, որ խախտվել է գնումների մասին ՀՀ օրենքը, բայց թե կոնկրետ, որ դրույթները, ակնհայտ են: Գտնում ենք, որ նման վերացական հիմքով /փաստացիորեն իրավական հիմքի բացակայության պայմաններում/ բողոքը վարույթ ընդունելը, իսկ այնուհետև այն բավարարելը ակնհայտ կապացուցի բողոքներ քննող անձի ոչ սուբյեկտիվ և կանխակալ լինելու փաստը:

Ներկայացված բողոքով վիճարկվել է նաև Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԴ/17845/02/20 քաղաքացիական գործով 23.06.2020թ. կայացած «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի ներկայացրած հայցի ապահովման միջնորդությունը բավարարելու մասին որոշման իրավաչափության հարցը /բողոքի 4 էջ/, որտեղ նշվել է, որ բացակայել է դատարանի կողմից հայցի ապահովման միջոց կիրառելու համար նախատեսված իրավական հիմքը:

Ավելին, բողոքի 5-րդ էջում «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ն մեղադրում է ընթացակարգի գնահատող հանձնաժողովին, որ վերջինս կատարել է

դատարանի իրավապարտադիր որոշումը, այսինքն՝ ի կատարում Դատարանի որոշման՝ կասեցրել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի 10.06.2020թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշման կատարումը և չի կատարել որևէ գործողություն՝ ուղղված այդ որոշման կատարմանը, մասնավորապես՝ նաև չի կնքել պայմանագիր «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի հետ:

Ըստ բողոքաբերի՝ գնահատող հանձնաժողովը չպետք է կատարեր Դատարանի այդ որոշումը, քանի որ Դատարանի որոշումը առարկայազուրկ էր:

Տպավորություն է ստեղծվում, որ «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ն շփոթել է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի հետ վիճարկում է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կայացրած որոշման իրավաչափությունը:

Միևնույն ժամանակ, գտնում ենք, որ Դատարանի իրավապարտադիր որոշման պայմաններում գնահատող հանձնաժողովի որոշումը եղել է միանգամայն իրավաչափ:

Մասնավորապես, Դատարանի իրավապարտադիր որոշմամբ դադարեցվել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի 10.06.2020թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշման իրավաբանական ուժը, իսկ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին արգելվել է կատարել որևէ գործողություն՝ ուղղված Գրիգոր Ներսիսյանի 10.06.2020թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշումը՝ «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի հայտ մերժելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ:

Այսինքն՝ Դատարանի իրավապարտադիր որոշման արդյունքում այս պահին «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի հայտը այլևս չէր կարող գնահատվել/դիտարկվել բավարար, ՓԲԸ-ն չէր կարող դիտարկվել որպես առաջին տեղ զբաղեցնող/ընտրված մասնակից, քանի որ վերջինիս հայտը բավարար գնահատելու մասին ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի որոշման իրավաբանական ուժը կասեցված է:

Նման պայմաններում ստացվում է, որ գործում է գնահատող հանձնաժողովի կայացրած որոշումները՝ «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ին «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի, իսկ «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին 1-ին

չափաբաժնի մասով հաղթող մասնակիցներ ճանաչելու և վերջիններիս հետ պայմանգիր կնքելու մասին որոշումները:

Փաստորեն, Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԴ/17845/02/20 քաղաքացիական գործով 23.06.2020թ. կայացրած «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ- 20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հետ էր վերադարձել այն փուլ, երբ Մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի հայտը մերժվել է և հաղթող մասնակից պետք է ճանաչվեր «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ն և «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն:

Հաշվի առնելով վերոհիշյալը և այդ կարևորագույն փաստը, որ Դատարանի իրավապարտադիր որոշմամբ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի 10.06.2020 թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշման իրավաբանական ուժը կասեցված էր, ուստի ի կատարումն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 15.04.2020թ. պայմանագիր կնքելու մասին որոշման, պետք է որոշում կայացվեր կնքել պայմանագիր գնահատող հանձնաժողովի կողմից հաղթող մասնակից ճանաչված «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի և «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հետ, ինչը կատարվել էր:

Միևնույն ժամանակ, «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից 16.07.2020թ. ներկայացված ԳԲՔԱ-ՆԳ-2020/63 բողոքը քննելիս՝ բողոքներ քննող անձը պետք է նկատի ունենա, որ այս բողոքը և դրա պահանջը դարձել են առարկայազուրկ:

Մասնավորապես, հենց բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի ներկայացրած միջնորդության հիման վրա «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ն պատրաստվում է նաև դիմել իրավասու մարմիններին՝ պարզելու համար, արդյոք նմանատիպ գործերով բողոքներ քննող անձը նույնպես դատարանին ներկայացրել է կիրառված հայցի ապահովման միջոցը վերացնելու միջնորդություն, թե դա տեղի է ունեցել բացառապես «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի գործով դատարանի 20.07.2020թ. որոշմամբ վերացվել է կիրառված հայցի ապահովման միջոցը և Գ.Ներսիսյանի 10.06.2020 թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշման կատարումից հանվել է դրված կասեցումը:

Նման պայմաններում ինքնին, գնահատող հանձնաժողովը պետք է դադարեցնի կայացրած որոշումը՝ կնքելու պայմանագիր հաղթող մասնակից ճանաչված «Մետքսկոմբինատ» ՍՊԸ-ի և «Գևգրուպ» ՍՊԸ-ի հետ, և պետք է որոշում կայացնի

«Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ -ի հետ պայմանագիր կնքելու վերավերյալ:

Նման պայմաններում, երբ ներկայացված բողոքը դարձել է լիովին առարկայազուրկ Երևան քաղաքի ընդհանուր իրավասություն առաջին ատյանի դատարանի կողմից թիվ ԵԴ/17845/02/20 քաղաքացիական գործով 20.07.2020թ. կայացրած որոշման պայմաններում, ուստի բողոքներ քննող անձի կողմից վերոհիշյալ բողոքի բավարարումը ևս մեկ անգամ կհաստատի Գ.Ներսիսյանի ոչ օբյեկտիվ լինելու հանգամանքը»:

Ամփոփելով վերոգրյալը՝ «Մետքսկոմբինատ» ՍՊԸ-ն խնդրել է 16.07.2020 «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքը մերժել (թողնել առանց քննության)՝ այն առարկայազուրկ լինելու հիմքով:

«Մետքսկոմբինատ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 30.07.2020թ. ժամը 10:00-ին և 04.08.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստերին:

4.«ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից 23.07.2020թ. գրությամբ ներկայացվել է միջնորդություն՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/63 բողոքով իրեն որպես երրորդ կողմ ներգրավելու վերաբերյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից միջնորդությունը բավարարվել է:

«ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն 03.08.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր կողմից է քննվում «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի 16.07.2020թ. ներկայացված ԳԲՔԱ-ՆԳ-2020/63 բողոքը:

Գտնում ենք, որ նշված բողոքը անհիմն է և ենթակա է մերժման:

Այսպես, «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ –ի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակում 16.07.2020թ. ներկայացված բողոքով վիճակվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ընթացակարգի հանձնաժողովի կողմից Դատարանի կողմից թիվ ԵԴ/17845/02/20 քաղաքացիական գործով 23.06.2020թ. «Հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» որոշման արդյունքում

գնահատող հանձնաժողովի «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Գտնում ենք, որ «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից 16.07.2020թ. ներկայացված բողոքը չի համապատասխանել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածով բողոքին ներկայացվող պահանջներին, մասնավորապես՝ բողոքում բացակայել է իրավական հիմքը, մինչդեռ նման պայմաններում նշված բողոքը բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանն ընդունել է վարույթ և 24.07.2020թ. նշանակել բողոքի քննության նիստ:

Մինչդեռ, ակնհայտ է, որ վերոհիշյալ բողոքը չպետք է ընդունվեր վարույթ, կամ առնվազն, Գրիգոր Ներսիսյանը պետք է ինքնաբացարկ հայտներ՝ հաշվի առնելով նրա կաշկանդվածությունը տվյալ ընթացակարգով 10.06.2020թ. կայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշմամբ և թիվ ԵԴ/17845/02/20 քաղաքացիական գործով 25.06.2020թ. ներկայացված միջնորդությամբ, ինչը, սակայն, տեղի չի ունեցել:

Ավելին, 30.07.2020 թ. «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից ներկայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/63 բողոքի քննության նիստի ժամանակ բողոքներ քննող անձը բանավոր, ընդամենը մեկ տող հիմնավորմամբ մերժեց «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի բացարկի միջնորդությունը և հայտնեց, որ պարտավոր չէ այդ որոշումը կայացնել գրավոր: Մինչդեռ, «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի բացարկի միջնորդությունը կազմված էր 7 էջից և բազմաթիվ հիմնավորումներից, որոնց պատասխանը կամ հակափաստարկները «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ն այդպես էլ չստացավ, ինչը ՍՊԸ-ի կարծիքով ևս մեկ անգամ ապացուցում է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ.Ներսիսյանի սուբյեկտիվ և կանխյալ վերաբերմունքը:

Ակնհայտ է, որ բողոքը պետք է բավարարվի, եթե արձանագրվի գնումների մասին ՀՀ օրենսդրության կոնկրետ պահանջների խախտում, մինչդեռ բողոքում ընդամենը վերացական նշվել է, որ խախտվել է գնումների մասին ՀՀ օրենքը, բայց թե կոնկրետ, որ դրույթները, ակնհայտ են: Գտնում ենք, որ նման վերացական հիմքով /փաստացիորեն իրավական հիմքի բացակայության պայմաններում/ բողոքը վարույթ ընդունելը, իսկ այնուհետև այն բավարարելը ակնհայտ կապացուցի բողոքներ քննող անձի ոչ սուբյեկտիվ և կանխակալ լինելու փաստը:

Ներկայացված բողոքով վիճարկվել է նաև Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԴ/17845/02/20 քաղաքացիական գործով 23.06.2020թ.

կայացած «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի ներկայացրած հայցի ապահովման միջնորդությունը բավարարելու մասին որոշման իրավաչափությոն հարցը /բողոքի 4 էջ/, որտեղ նշվել է, որ բացակայել է դատարանի կողմից հայցի ապահովման միջոց կիրառելու համար նախատեսված իրավական հիմքը:

Ավելին, բողոքի 5-րդ էջում «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ն մեղադրում է ընթացակարգի գնահատող հանձնաժողովին, որ վերջինս կատարել է դատարանի իրավապարտադիր որոշումը, այսինքն՝ ի կատարում Դատարանի որոշման՝ կասեցրել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի 10.06.2020թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշման կատարումը և չի կատարել որևէ գործողություն՝ ուղղված այդ որոշման կատարմանը, մասնավորապես՝ նաև չի կնքել պայմանագիր «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի հետ:

Ըստ բողոքաբերի՝ գնահատող հանձնաժողովը չպետք է կատարեր Դատարանի այդ որոշումը, քանի որ Դատարանի որոշումը առարկայազուրկ էր:

Տպավորություն է ստեղծվում, որ «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ն շփոթել է գնումերի հետ կապված բողոքներ քննող անձին ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի հետ վիճարկում է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կայացրած որոշման իրավաչափությունը:
Միևնույն ժամանակ, գտնում ենք, որ Դատարանի իրավապարտադիր որոշման պայմաններում գնահատող հանձնաժողովի որոշումը եղել է միանգամայն իրավաչափ:

Մասնավորապես, Դատարանի իրավապարտադիր որոշմամբ դադարեցվել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի 10.06.2020թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշման իրավաբանական ուժը, իսկ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին արգելվել է կատարել որևէ գործողություն՝ ուղղված Գրիգոր Ներսիսյանի 10.06.2020թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշումը՝ «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի հայտ մերժելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ:

Այսինքն՝ Դատարանի իրավապարտադիր որոշման արդյունքում այս պահին «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի հայտը այլևս չէր կարող գնահատվել/դիտարկվել բավարար, ՓԲԸ-ն չէր կարող դիտարկվել որպես առաջին տեղ զբաղեցնող/ընտրված մասնակից, քանի որ վերջինիս հայտը բավարար գնահատելու

մասին ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի որոշման իրավաբանական ուժը կասեցված է:

Նման պայմաններում ստացվում է, որ գործում է գնահատող հանձնաժողովի կայացրած որոշումները՝ «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնի մասով, իսկ «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ին «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի հաղթող մասնակիցներ ճանաչելու և վերջիններիս հետ պայմանգիր կնքելու մասին որոշումները:

Փաստորեն, Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԴ/17845/02/20 քաղաքացիական գործով 23.06.2020թ. կայացրած «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ- 20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հետ էր վերադարձել այն փուլ, երբ Մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի հայտը մերժվել է և հաղթող մասնակից պետք է ճանաչվեր «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն և «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ն:

Հաշվի առնելով վերոհիշյալը և այդ կարևորագույն փաստը, որ Դատարանի իրավապարտադիր որոշմամբ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի 10.06.2020 թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշման իրավաբանական ուժը կասեցված էր, ուստի ի կատարումն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 15.04.2020թ. պայմանագիր կնքելու մասին որոշման, պետք է որոշում կայացվեր կնքել պայմանագիր գնահատող հանձնաժողովի կողմից հաղթող մասնակից ճանաչված «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի հետ, ինչը կատարվել էր:

Միևնույն ժամանակ, «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից 16.07.2020թ. ներկայացված ԳԲՔԱ-ՆԳ-2020/63 բողոքը քննելիս՝ բողոքներ քննող անձը պետք է նկատի ունենա, որ այս բողոքը և դրա պահանջը դարձել են առարկայազուրկ:

Մասնավորապես, հենց բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի ներկայացրած միջնորդության հիման վրա «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ն պատրաստվում է նաև դիմել իրավասու մարմիններին՝ պարզելու համար, արդյոք նմանատիպ գործերով բողոքներ քննող անձը նույպես դատարանին ներկայացրել է կիրառված հայցի ապահովման միջոցը վերացնելու միջնորդություն, թե դա տեղի է ունեցել բացառապես «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի գործով դատարանի 20.07.2020թ. որոշմամբ վերացվել

է կիրառված հայցի ապահովման միջոցը և Գ.Ներսիսյանի 10.06.2020 թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշման կատարումից հանվել է դրված կասեցումը:

Նման պայմաններում ինքնին, գնահատող հանձնաժողովը պետք է դադարեցնի կայացրած որոշումը՝ կնքելու պայմանագիր հաղթող մասնակից ճանաչված «Գևգրուպ» ՍՊԸ-ի և «Մետքսկոմբինատ» ՍՊԸ-ի հետ, և պետք է որոշում կայացնի «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ -ի հետ պայմանագիր կնքելու վերավերյալ:

Նման պայմաններում, երբ ներկայացված բողոքը դարձել է լիովին առարկայազուրկ Երևան քաղաքի ընդհանուր իրավասություն առաջին ատյանի դատարանի կողմից թիվ ԵԴ/17845/02/20 քաղաքացիական գործով 20.07.2020թ. կայացրած որոշման պայմաններում, ուստի բողոքներ քննող անձի կողմից վերոհիշյալ բողոքի բավարարումը ևս մեկ անգամ կհաստատի Գ.Ներսիսյանի ոչ օբյեկտիվ լինելու հանգամանքը»:

Ամփոփելով վերոգրյալը՝ «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն խնդրել է 16.07.2020 «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքը մերժել (թողնել առանց քննության)՝ այն առարկայազուրկ լինելու հիմքով:

«ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 30.07.2020թ. ժամը 10:00-ին և 04.08.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստերին:

5. ԳԲՔԱ-ՆԳ-2020/63 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2020/63 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար դերձակի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 30.03.2020թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի հայտում բացակայել են մասնակցի կողմից ներկայացվելիք փաստաթղթերը, այդ թվում՝ գնային առաջարկը,

ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները, որոշում է կայացրել Ընկերության հայտը հրավերի պահանջներին անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

3. «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից 17.04.2020թ. բողոք է ներկայացվել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, որը 10.06.2020թ. կայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշմամբ բավարարվել է:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.06.2020թ. նիստի թիվ 4 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 10.06.2020թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշումը, որոշում է կայացրել 30.03.2020թ. թիվ 3 արձանագրության 2.2 կետի որոշումը դադարեցնելու վերաբերյալ:

5. Նույն արձանագրության 2.1 կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից տրամադրված՝ «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատվել են որպես «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

6. Նույն արձանագրության 4.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ին ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարելու մասին:

7. Նույն արձանագրության 4.4 կետի համաձայն՝ որոշում է կայացվել ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.07.2020թ. նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ հիմք ընդունելով ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի ԵԴ/17845/02/20 քաղաքացիական գործով հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշումը ՝ համաձայն որի վերջինս արգելել է ՀՀ պաշտպանության նախարարությանը կատարել որևէ գործողություն՝ ուղղված ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ.Ներսիսյանի 10.06.2020թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշման կատարմանը, ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է դադարեցնել իր կողմից 19.06.2020թ. կայացրած «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10»

ծածկագրով ընթացակարգում 30.03.2020թ. թիվ 3 արձանագրության 2.2 կետի որոշումը դադարեցնելու մասին որոշումը:

9. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրության 3.1 կետի համաձայն՝ հիմք ընդունելով վերոգրյալը՝ որոշում է կայացրել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակիցներից ընտրված մասնակից հայտարարել՝ «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին՝ 1-ին չափաբաժնի մասով, «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ին՝ 2-րդ չափաբաժնի մասով:

10. ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը 20.07.2020թ. որոշում է կայացրել թիվ ԵԴ/17845/02/20 քաղաքացիական գործով պատասխանող՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի, երրորդ անձ՝ «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի՝ կիրառված հայցի ապահովման միջոցը վերացնելու մասին միջնորդությունները բավարարելու՝ ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 23.06.2020թ. որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը վերացնելու մասին, այն է՝

1. Կասեցնել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի 10.06.2020թ.-ի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշման կատարումը՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

2. Արգելել ՀՀ պաշտպանության նախարարությանը կատարել որևէ գործողություն՝ ուղղված սույն միջնորդության 1-ին կետով նշված որոշման կատարմանը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ -ի 16.07.2020թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ պաշտպանության նախարարության 21.07.2020թ. գրությամբ հայտնած դիրքորոշումը, «Մետաքսկոմբինատ» ՍՊ և «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունների ներկայացրած գրությունները և գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար դերձակի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.03.2020թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի հայտում բացակայել են մասնակցի կողմից ներկայացվելիք փաստաթղթերը, այդ թվում՝ գնային առաջարկը, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները, որոշում է կայացրել Ընկերության հայտը հրավերի պահանջներին անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

«Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից 17.04.2020թ. բողոք է ներկայացվել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, որը 10.06.2020թ. կայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշմամբ բավարարվել է:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.06.2020թ. նիստի թիվ 4 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 10.06.2020թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշումը, որոշում է կայացրել 30.03.2020թ. թիվ 3 արձանագրության 2.2 կետի որոշումը դադարեցնելու վերաբերյալ:

Նույն արձանագրության 2.1 կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից տրամադրված՝ «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատվել են որպես «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Նույն արձանագրության 4.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ին ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարելու մասին:

Նույն արձանագրության 4.4 կետի համաձայն՝ որոշում է կայացվել ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.07.2020թ. նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ հիմք ընդունելով ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի ԵԴ/17845/02/20 քաղաքացիական գործով հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշումը՝ համաձայն որի վերջինս արգելել է ՀՀ պաշտպանության նախարարությանը կատարել որևէ գործողություն՝ ուղղված ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ.Ներսիսյանի 10.06.2020թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշման կատարմանը, ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է դադարեցնել իր կողմից 19.06.2020թ. կայացրած «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով ընթացակարգում 30.03.2020թ. թիվ 3 արձանագրության 2.2 կետի որոշումը դադարեցնելու մասին որոշումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրության 3.1 կետի համաձայն՝ հիմք ընդունելով ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի ԵԴ/17845/02/20 քաղաքացիական գործով հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշումը՝ որոշում է կայացրել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակիցներից ընտրված մասնակից հայտարարել՝ «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին՝ 1-ին չափաբաժնի մասով, «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ին՝ 2-րդ չափաբաժնի մասով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 26.06.2020թ. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան ներկայացվել է միջնորդություն թիվ ԵԴ/17845/02/20 գործով կիրառված հայցի ապահովում վերացնելու վերաբերյալ, որը 20.07.2020թ. կայացված որոշմամբ բավարարվել է:

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 20.07.2020թ. որոշում է կայացրել թիվ ԵԴ/17845/02/20 քաղաքացիական գործով պատասխանող՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի, երրորդ անձ՝ «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի՝ կիրառված հայցի

ապահովման միջոցը վերացնելու մասին միջնորդությունները բավարարելու՝ ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 23.06.2020թ. որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը վերացնելու մասին, այն է՝

1. Կասեցնել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի 10.06.2020թ.-ի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշման կատարումը՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

2. Արգելել ՀՀ պաշտպանության նախարարությանը կատարել որևէ գործողություն՝ ուղղված սույն միջնորդության 1-ին կետով նշված որոշման կատարմանը:

«Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի կողմից 23.07.2020թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել է ինքնաբացարկ հայտնելու վերաբերյալ միջնորդություն հետևյալ բովանդակությամբ.

«Ձեր վարույթում է քննվում «Արցախի կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից 16.07.2020 թ. ներկայացված ԳԲՔԱ-ՆԳ-2020/63 բողոքը, որով վիճարկվել է ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար դերձակի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ -20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.07.2020 թ. թիվ 5 որոշումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն անշահախնդիր և անկախ քննություն իրականացնող մարմին է, որը շահագրգռված չէ կոնկրետ գնումների գործընթացի արդյունքներով և իր պարտականությունների ու իրավունքների կատարման ժամանակ պաշտպանված է արտաքին ազդեցություններից: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքներն ուսումնասիրում է պատշաճ մանրամասնությամբ և անաչառորեն: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքով նախատեսված լիազորություններն իրականացնելիս անկախ է գնման գործընթացի մասնակիցներից, այդ թվում՝ պատվիրատուներից, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնյաներից և պարտավոր է ղեկավարել բացառապես գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կիրառել այն:

Գտնում ենք, որ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ.Ներսիսյանը չի կարող անշահախնդիր, անաչառ և անկախ քննություն իրականացնել «Արցախի կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից 16.07.2020 թ. ներկայացված ԳԲՔԱ-

ՆԳ-20202/63 բողոքով, ավելին, ըստ ՍՊԸ-ի՝ բողոքը քննող անձը ունի կանխակալ վերաբերմունք «Արցախի կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի նկատմամբ, ինչը դրսևորվել է «Արցախի կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից նախկինում նույն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունների դեմ 17.04.2020թ. բերված բողոքի քննության ընթացքում, հետևյալ պատճառաբանությամբ.

1) «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ն /այսուհետ նաև՝ ՍՊԸ/ հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար դերձակի ծառայությունների /կոստյում բամբակյա կեպիով/ ձեռքբերման նպատակով հայտարարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Համաձայն գնահատող հանձնաժողովի 30.03.2020 թիվ 3 արձանագրության 2.2 կետի՝ մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջող փաստաթղթերն առկա են, բացառությամբ «Արցախի կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի հայտի, որում բացակայում է մասնակցի կողմից ներկայացվելիք փաստաթղթերը, այդ թվում գանայինառաջարկը, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները, որոշեց «Արցախի կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի հայտը գնահատել անբավարար (անհամապատասխան) սույն ընթացակարգի հրավերի պահանջներին և մերժել նրա հայտը:

Իսկ նույն արձանագրության 4.1 կետի համաձայն՝ «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից, «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ն ճանաչվել է 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից:

«Արցախի կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ն 17.04.2020 ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնել բողոք, որով վիճակել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ–ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման և մերժելու մասին որոշումները և խնդրել բողոքներ քննող անձին պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել ՀՀ Պաշտպանության նախարարության կարիքների համար «Դերձակի ծառայությունների» ձեռք բերման նպատակով հայտարարված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի

կողմից «Արցախի կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ.Ներսիսյանի կողմից 10.06.2020թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշմամբ /կցվում է/ բավարարել է «Արցախի կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից 17.04.2020թ. ներկայացված բողոքը հետևյալ հիմնավորմամբ, մասնավորապես՝

«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից 05.06.2020թ. ներկայացվել է համակարգչատեխնիկական փորձաքննության թիվ 20-0044 Պ «Փորձագետի եզրակացության» վերաբերյալ համապատասխան ստորաբաժանման ղեկավարի պարզաբանումը՝ հետևյալ բովանդակությամբ. «Ձեր կողմից նշված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ -20-7/10» ծածկագրով մրցույթին » «Արցախի կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից /այսուհետ՝ Ընկերություն/ Armeps էլեկտրոնային գնումների համակարգ մուտքագրված հայտի վերաբերյալ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում իրականացված համակարգչատեխնիկական փորձաքննությամբ պարզվել է, որ Ընկերության կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով մրցույթին մասնակցելու համար ստեղծված հայտն /այսուհետ՝ Հայտ/ Armeps էլեկտրոնային գնումների համակարգ մուտքագրվել է նույնությամբ՝ առանց փոփոխությունների, Հայտի վերբեռնման / +-10ր/ ժամանակահատվածում Armeps համակարգի խափանման վերաբերյալ տեղեկառվություն չի հայտնաբերվել, Ընկերության կողմից Հայտի ստեղծման ընթացքում հրավերով նախատեսված փաթեթին կցելուց հետո /մինչև Հայտի փաթեթի փաթեթավորումը/ դրանց հեռացնելու վերաբերյալ /այդ թվում՝ հակավիրուսային ծրագրային ապահովման կողմից/ տեղեկատվություն չի հայտնաբերվել»:

Ելնելով վերոգրյալից՝ եզրակացվել է, որ Հայտի փաթեթում հրավերով նախատեսված փաստաթղթերի առկա չլինելը կարող էր պայմանավորված լինել համապատասխան ծրագրային ապահովման՝«Հայտերի նախապատրաստման գործիք»-ի թերությամբ , որի արդյունքում Հայտի նախապատրաստման ընթացքում անհրաժեշտ փաստաթղթերը կցվել են Հայտի փաթեթին, պահպանվել են, սակայն Հայտի փաթեթի փաթեթավորման ընթացքում չեն ներառվել Հայտի փաթեթում»:

Վերը նշված՝ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 27.05.2020թ. թիվ 20-0044 Պ փորձագիտական եզրակացությունը և համակարգչատեխնիկական փորձաքննության թիվ 20-0044 Պ «Փորձագետի եզրակացության» վերաբերյալ

տրամադրված համապատասխան ստորաբաժանման ղեկավարի պարզաբանումն ուղարկվել են կողմերին՝ վերջիններիս ընձեռնելով ներկայացվող փաստաթղթերի վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելու հնարավորություն:

«ԱՅՅՈՒՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊ ընկերությունը /ՍՊԸ-ն իրականացվում է Armeps էլեկտրոնային համակարգի սպասարկումը/ 08.06.2020 թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը. «Ծանոթանալով 05.06.2020 ofeli.kirakosyan92@gmail.com» էլեկտրոնային փոստի հասցեից ստացված «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փորձագիտական եզրակացությանը և ի լրումն մեր 27.04.2020թ. գրության՝ տեղեկացնում ենք, որ ինչպես և նշել էինք մեր նախորդ գրության մեջ, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով ընթացակարգին «Արցախի կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթը պատշաճ կերպով ապակոդավորվել և առկա է, այն ուղղակի դատարկ է:

Քանի որ հայտի փաթեթը կազմվում, փաթեթավորվում և վերբեռնվում է մասնակցի կողմից իր իսկ համակարգչով, և, եթե ինչ-որ բան այնպես չէ, նշանակում է՝ այն պատշաճ կերպով չի կազմվել և վերբեռնվել համակարգ մասնակցի կողմից:

Ինչպես նաև ստանալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 1/30/7215-2020 18.05.2020թ. գրությունը՝ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի մասնագետի հետ իրականացրել ենք մի շարք ուսումնասիրություններ և մեր կողմից տրամադրել ենք համապատասխան տեղեկությունն առ այն, որ նշված ժամանակահատվածում Armeps էլեկտրոնային գնումների համակարգի աշխատանքնային պրոցեսի որևիցե խափանում չի արձանագրվել, համակարգում իրականացված բոլոր գործողությունները լոգավորվել են /պահպանվել են/ և տվյալների բազում առկա են բոլոր 3 մասնակիցների կողմից ներկայացված zip ֆայլերը:

Այսինքն՝ հայտարարված մրցույթին կասնակցությունը իրականացվել է պատշաճ ձևով, և որևէ տեխնիկական խնդիր առկա չէ:

Միաժամանակ գտնում ենք, որ նշված բողոքի քննության գործի շրջանակներում «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից տրված եզրակացությունը չի պարունակում հստակ պարունակում հստակ պատասխաններ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից առաջադրած հարցերի վերաբերյալ, իսկ մեր ընկերության կողմից տրամադրված տեղեկատվությունը ճշգրիտ է և ամբողջական:

Մասնավորապես, եզրակացության մեջ նշված այն եզրահանգումը, որ Հայտի փաթեթում հրավերով նախատեսված փաստաթղթերի առկա չլինելը կարող էր պայմանավորված լինել համապատասխան ծրագրային ապահովման՝ «Հայտերի նախապատրաստման գործիք» թերությամբ, որի արդյունքում Հայտնի նախապատրաստման ընթացքում անհրաժեշտ փաստաթղթերը կցվել են Հայտի փաթեթին, պահպանվել են, սակայն Հայտի փաթեթի փաթեթավորման ընթացքում չեն ներառվել Հայտի փաթեթում, չի նշանակում, որ քննվող գործի շրջանակներում zip ֆայլի դատարկ լինելու պատճառը միաժամանակ գործիքի թերի աշխատանքն է, քանի որ zip ֆայլը կարող է դատարկ փաթեթավորվել, երբ, օրինակ, մասնակիցը բացում է «Հայտերի նախապատրաստման գործիք»-ը, տեղադրում է XML ֆայլը, գեներացվում է 3 ֆայլ՝ XML, ֆինանսական և տեխնիկական ֆայլերը և zip ֆորմատով Հայտի փաթեթը: Այս 3 ֆայլերից համակարգ ուղարկվում է միայն zip ֆայլը: Մյուս ֆայլերը պահպանվում են մասնակցի համակարգչի մեջ: Եթե պահպանելուց հետո «Հայտերի նախապատրաստման գործիք»-ի պատուհանը մնում է բաց վիճակում և իր համակարգչից մասնակիցը որոշում է հեռացնել կամ փոփոխել պահպանված ֆայլերը և նորից պահպանում, վավերացնում և փաթեթավորում է նույն պատուհանի մեջ, երևում են միայն ֆայլերի անունները, սակայն իրական ֆայլերը չեն պահպանվում: Եվ եթե հենց այդ ժամանակ մասնակիցը բացի ֆայլերը կտեսնի, որ դատարկ են:

Այսինքն՝ որպեսզի դատարկ չլինի, պետք է գործիքը փակի, նորից բացի և կցի արդեն փոփոխված և պահպանված ֆայլերը: Տեղեկացնում ենք, որ Armeps էլեկտրոնային գնումների համակարգի գրանցված լոգերում հստակ երևում է, որ մեր կողմից տրամադրվել է նաև «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի մասնագետին, մասնակիցը Հայտի ներկայացման գործողությունը կատարել է 2 անգամ և, հավանաբար, հենց այս է եղել դատարկ zip ֆայլի ներբեռնման պատճառը:

Ամփոփելով վերոգրյալը, տեղեկացնում ենք, որ առաջացած խնդիրը չի կարող լինել «Հայտերի նախապատրաստման գործիք»-ի սխալ աշխատանքի պատճառով, այլ հայտի փաթեթը մասնակցի կողմից պատշաճ կերպով չի կազմվել և վերբեռնվել համակարգ:

Սակայն, գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ.Ներսիսյանը «Արցախի կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից 17.04.2020 թ. ներկայացված բողոքը բավարարել է և 10.06.2020թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշմամբ պարտավորեցրել

է «ՀՀ ՊՆ ՆՏԱԳ –ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. Դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար դերձակի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Արցախի կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

2. Քննության առնել ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետի եզրակացությամբ տրամադրված «Արցախի կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից Ընթացակարգին հայտ ներկայացնելու նպատակով հայտերի նախապատրաստման համակարգ մուտքագրված՝ «ԴԻՄՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» թիվ 1 հավելվածը, «ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ» թիվ 2 հավելվածը և թիվ ԱԲԵՆ20/48-23 երաշխիքի լուսապատճենը:

Այսպիսով, «Արցախի կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած բողոքով բողոքներ քննող անձի կողմից 10.06.2020 թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշման հիմքում դրվել է «Փորձաքննություններ ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի եզրակացությունը, որտեղ ընդամենը արվում է վերացական եզրահանգում, որ հայտի փաթեթում հրավերով նախատեսված փաստաթղթերի առկա չլինելը կարող է պայմանավորված լինել համապատասխան ծրագրային ապահովման՝ «Հայտերի նախապատրաստման գործիք»-ի թերությամբ, ինչը չի նշանակում, որ քննվող գործի շրջանակներում zip ֆայլի դատարկ լինելու պատճառը միաժամանակ գործիքի թերի աշխատանքն էր:

Միևնույն ժամանակ նույն գործի շրջանակներում Armeps համակարգը սպասարկող «ԱՅՅՈՒՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ-ն հայտնել էր, որ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից տրված եզրակացությունը չի պարունակում հստակ պատասխաններ ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից առաջադրած հարցերի բերաբերյալ, իսկ «ԱՅՅՈՒՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված տեղեկատվությունը ճշգրիտ է և ամբողջական, և հայտնել, որ հայտի ներկայացման գործողությունը կատարել է 2 անգամ և հենց այս է եղել դատարկ zip ֆայլի ներբեռնման պառճառը:

Մինչդեռ, վիճարկվող որոշմամբ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը ընդհանրապես չի ուսումնասիրել և չի գնահատել «ԱՅՅՈՒՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված եզրակացությունը, իսկ որոշման կայացման հիմքում դրել է բացառապես

«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը, այն դեպքում, երբ ինչպես արդեն նշել ենք, ՊՈԱԿ-ի կողմից ընդամենը արվել է եզրահանգում, որ առաջացած խնդիրը ԿԱՐՈՂ էր պայմանավորված լինել Armeps համակարգի աշխատանքի թերացման հետ:

Վերոհիշյալը, ըստ ՍՊԸ-ի, հանգեցրել է վկայակոչված որոշմանոչ բազակողմանի, չհիմնավորված և ոչ օբյեկտիվ լինելուն:

2) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-դ մասի համաձայն՝ բողոքի վերաբերյալ գրավոր որոշումը, որը ներառում է նաև որոշման հիմնավորումը, ընդունվում և հրապարակվում է բողոքն ստանալու օրվանից ոչ ուշ քան 20 օրացույցային օրվա ընթացքում: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի պատճառաբանված որոշմամբ սույն կետով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև 10 օրացույցային օրով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգը հաստատելու մասին ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. հաստատված 600-ն հրամանի 13-րդ կետի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների:Բողոքի քննությունն իրականացվում և որոշումը կայացվում է բողոքը վարույթն ընդունելու օրվանից ոչ ուշ քան քսան օրացույցային օրվա ընթացքում:Նշված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացույցային օրով՝ Անձի պատճառաբանված միջանկյալ որոշմամբ: Ընդ որում միջանկյալ որոշումը կայացնելու օրը Անձն ապահովում է դրա մասին համապատասխան հայտարարության հայտարարումը տեղեկագրում:

Ցանկանում ենք հայտնել, որ «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից 17.04.2020 թ. բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ որոշումը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից կայացվել է 10.06.2020թ., այսինքն՝ բողոքը վարույթ ընդունելուց հետո 53 օրացույցային օր անց, մինչդեռ թե «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով և թե ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. 600-Ն հրամանով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին վերապահված լիազորություններով բողոքը պետք է քննվեր 20 օրացույցային օրվա ընթացքում, որը կարող էր երկարաձգվել մինչև 10 օրացույցային օր, 17.05.2020թ. և ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ.Ներսիսյանը իրավունք չուներ «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքը

շարունակել քննել և որոշում կայացնել օրենքով նախատեսված ժամկետըլրանալուց հետո՝ բողոքի քննության համար սահմանված ժամկետից 23 օրացույցային օր անց:

Ավելին, նման պայմաններում գնումների մասին ՀՀ օրենսդրությունը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին իրավունք չի վերապահում նաև կասեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով և ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018 թ. 600-Ն հրամանով սահմանված ժամկետը՝ անգամ փորձաքննություն նշանակելու դեպքում, այսինքն սահմանված ժամկետը հանդիսանում է իմպերատիվ պահանջ և չպետք է խախտեր բողոքներ քննող անձի կողմից:

«Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի մոտ տպավորություն է ստեղծվում, որ ունենալով «ԱՅՅՈՒՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված տեղեկատվությունը առ այն, որ «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական միավորում» ՓԲԸ-ի հայտի փաթեթում հրավերով նախատեսված փաստաթղթերի առկա չլինելը պայմանավորված չի եղել համակարգի թերի աշխատանքով, բողոքներ քննող անձը ամեն գնով, անգամ Օրենքով նախատեսված ժամկետների խախտմամբ, սպասել է «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի եզրակացությանը /չնայած այդ եզրակացության վերացական, ոչ ամբողջական և ոչ հստակ բնույթի է/, որ կարողանա բավարարի «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական միավորում» ՓԲԸ-ի ներկայացրած բողոքը:

1) Կասկածելի է նաև հետևյալ հանգամանքը.

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում քննվում է թիվ ԵԴ 17845/02/20 քաղաքացիական գործն ըստ հայցի «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ.Ներսիսյանի՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ.Ներսիսյանի՝ 10.06.2020թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Սույն քաղաքացիական գործի շրջանակներում «Մետքսկոմբինատ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է նաև հայցի ապահովման միջնորդություն:

Երևանի քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԴ /17845/02/20 քաղաքացիական գործով 23.06.2020թ. կայացրած որոշմամբ «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի ներկայացրած հայցի ապահովման միջնորդությունը բավարարվել էր: Դատարանը որոշել է՝

1. Կասեցնել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ.Ներսիսյանի 10.06.2020թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշման կատարումը՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

2. Արգելել ՀՀ պաշտպանության նախարարությանը կատարել որևէ գործողություն՝ ուղղված սույն միջնորդության 1-ին կետով նշված որոշման կատարմանը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ.Ներսիսյանի կողմից 25.06.2020թ. ներկայացված միջնորդությամբ վիճարկել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԴ17845/02/20 քաղաքացիական գործով 23.06.2020թ. կայացրած որոշման իրավաչափությունը:

Հարց է առաջանում, թե ինչպես է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ.Ներսիսյանը իրազեկվել է Դատարանի կողմից ԵԴ17845/02/20 քաղաքացիական գործով 23.06.2020թ. «Հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» որոշում ընդունելու մասին, և առավել ևս, ինչպես է ծանոթացել այդ որոշման բովնդակությանը, եթե որոշումը ընդունվել է 23.06.2020թ., իսկ detalex համակարգում 25.06.2020թ. ընդամենը նշվել է , որ ներկայացվել է հայցի ապահովման միջնորդություն, որը բավարարվել է: Այդ նշումը detalex համակարգում ունի հետևյալ տեսքը.

Ներկայացվել է միջնորդություն: Ապահովում կիրառելու

Բավ/մերժ: Բավարարվել է

Մինչդեռ նման իրազեկված չլինելու պայմաններում (հենց բողոքներ քննող անձն է նշում իր միջնորդությամբ, որ չի ստացել հայցադիմումը և համապատասխանաբար, չէր կարող տեղյակ լինել, թե ինչ հայցի ապահովման միջնորդություն է ներկայացվել «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի կողմից) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ.Ներսիսյանը քաջատեղյակ լինելով Դատարանի կայացված որոշումից և դրա բովանդակությունից՝ 25.06.2020թ. (այսինքն այն նույն օրը, երբ տեղեկությունը որոշման մասին հրապարակվել է datalex համակարգում) միջնորդություն է ներկայացնում դատարան հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ որոշումը վերացնելու վերաբերյալ:

«Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի մոտ տպավորություն է ստեղծվում, որ նման եղանակով բողոքներ քննող անձը ամեն գնով փորձել է կանխել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ի վնաս Արցախ Կարի-

Կոշիկի Արտադրական միավորում» ՓԲԸ-ի, «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի և «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու ցանկացած հնարավորություն:

Շատ կարևոր է հետևյալ կարևոր հանգամանքը. Դատարանի կողմից թիվ ԵԴ/17845/02/20 քաղաքացիական գործով 23.06.2020թ. կայացրած «հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմամբ և դրա հետևանքներով մտահոգված է ոչ թե ՀՀ ՊՆ-ն ում կողմից հայտարարված ընթացակարգը, ըստ բողոքներ քննող անձի, կասեցված է, այլ բողոքներ քննող անձը: Փաստորեն ստացվում է, որ ՀՀ ՊՆ-ին ընդհանրապես չի մտահոգում, ոչ 23.06.2020թ. կայացրած որոշման արդյունքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը իբրև թե կասեցվել է, սակայն այդ խնդիրը մտահոգում է բողոքներ քննող անձին: Մինչդեռ, պատասխանը շատ պարզ է. ՀՀ ՊՆ-ին չի մտահոգում դատարանի 23.06.2020թ. կայացրած «հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» որոշումը, քանի որ վերոհիշյալ որոշումը չի հանգեցրել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի կասեցմանը (վերոհիշյալը ապացուցվում է 14.07.2020թ. հանձնաժողովի նիստի արձանագրությամբ) և համապատասխանաբար չի ներկայացվել միջնորդություն այդ որոշումը վերացնելու վերաբերյալ:

4) Եվ վերջապես ևս մեկ կասկածելի հանգամանք, որը ՍՊԸ-ի կարծիքով կարող է մեկնաբանվել որպես բողոքներ քննող անձի անձնական շահերով առաջնորդվել, ինչը հանգում է հետևյալին.

«Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում 16.07.2020թ. կրկին ներկայացվել է բողոք, որով վիճարկվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Դատարանի կողմից թիվ ԵԴ/17845/02/20 քաղաքացիական գործով 23.06.2020թ. «հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» որոշման արդյունքում գնահատող հանձնաժողովի «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Գտնում ենք, որ «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից 16.07.2020թ. ներկայացված բողոքը չի համապատասխանել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածով բողոքին ներկայացվող պահանջներին, մասնավորապես

բողոքում բացակայում է իրավական հիմքը, մինչդեռ նման պայմաններում նշված բողոքը բողոքներ քննող անձ Գ.Ներսիսյանը ընդունել է վարույթ և 24.07.2020թ. նշանակել բողոքի քննության նիստ:

Մինչդեռ ակնհայտ է, որ վերոհիշյալ բողոքը չպետք է ընդունվեր վարույթ, կամ առնվազն, Գրիգոր Ներսիսյանը պետք է ինքնաբացարկ հայտներ՝ հաշվի առնելով նրա կաշկանդվածությունը տվյալ ընթացակարգով 10.06.2020թ. կայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշմամբ և թիվ ԵԴ/17845/02/20 քաղաքացիական գործով 25.06.2020թ. ներկայացված միջնորդությամբ, ինչը սակայն տեղի չի ունեցել:

Եվ ամենակարևոր փաստը, որի պայմաններում «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ն գտնում է, որ բողոքներ քննող անձը չի կարող օբյեկտիվ և անաչառ քննել «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից 16.07.2020թ. ներկայացված ԳԲՔԱ-ՆԳ-2020/63 բողոքը, որը ուղղված է «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի շահերի դեմ, դա այն է, որ նշված փաստարկները բողոքի տեսքով «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի կողմից 20.07.2020թ. ներկայացվել են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին, քանի որ ՍՊԸ-ն գտել է, որ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար դերձակի ծառայությունների (կոստյում բամբակյա կեպիով) ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման հետ կապված բողոքներ քննելիս՝ թույլ է տրվել շահերի բախման դեպք, որը «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի կարծիքով, կարող էր մեկնաբանվել որպես բողոքներ քննող անձի անձնական շահերով առաջնորդվել:

Այսպիսով, հաշվի առնելով վերը շարադրվածը պնդում ենք, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ.Ներսիսյանը չի կարող անշահախնդիր, անկախ և օբյեկտիվ քննություն իրականացնել «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից 16.07.2020թ. ներկայացված ԳԲՔԱ-ՆԳ-2020/63 բողոքով, վերոհիշյալ փաստարկները կարող են կանխորոշել Գ.Ներսիսյանի կողմից կանխակալ վերաբերմունք, ուստի բացարկ ենք հայտնում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ.ներսիսյանին և միջնորդում ենք, որպեսզի գնումների հետ կավված բողոքներ քննող անձ Գ.Ներսիսյանը հայտնի ինքնաբացարկ ԳԲՔԱ-ՆԳ-2020/63 բողոքի քննումից»:

Այնուհետև՝ 28.07.2020թ. ինքնաբացարկ հայտնելու վերաբերյալ միջնորդության լրացում հետևյալ բովանդակությամբ.

«Ի լրումն 23.07.2020թ. «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բացարկի միջնորդության, հայտնում ենք, որ առկա է ևս մեկ հիմք, որի պայմաններում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ.Ներսիսյանը չի կարող անշահախնդիր, անկախ և օբյեկտիվ քննություն իրականացնել «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից 16.07.2020թ. ներկայացված ԳԲՔԱ-ՆԳ-2020/63 բողոքով:

Այդ հիմքը կայանում է հետևյալում.

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԴ/17845/02/20 քաղաքացիական գործով պատասխանող ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ.Ներսիսյանի կողմից 26.06.2020թ. ներկայացվել է հայցի ապահովումը վերացնելու մասին միջնորդություն, որում Գ.Ներսիսյանը միտք է արտահայտել, որ իրավաչափ չէ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունը, ով հիմք ընդունելով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԴ/17845/02/20 քաղաքացիական գործով 23.06.2020թ. կայացրած հայցի ապահովման միջնորդությունը բավարարելու որոշումը, որոշում է կայացրել Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքել համապատասխանաբար «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի հետ:

Նույն որոշման (այսինքն գնահատող հանձնաժողովի որոշումը Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԴ/17845/02/20 քաղաքացիական գործով 23.06.2020թ. կայացրած հայցի ապահովման միջնորդությունը բավարարվելու որոշման պայմաններում Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ) իրավաչափության հարցը վիճարկվել է նաև «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից 16.07.2020թ. ներկայացված ԳԲՔԱ-ՆԳ-2020/63 բողոքով:

Այսինքն՝ տվյալ պարագայում ակնհայտ է, որ վերոհիշյալը կարող է կանխորոշել Գ.Ներսիսյանի կողմից կանխակալ վերաբերմունքը «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից 16.07.2020թ. ներկայացված ԳԲՔԱ-ՆԳ-2020/63 բողոքի նկատմամբ:

Ուստի գտնում ենք, որ նաև այս հիմնավորմամբ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ.Ներսիսյանը պետք է ինքնաբացարկ հայտնի ԳԲՔԱ-ՆԳ-2020/63 բողոքի քննումից»:

«Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 29.07.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«16.07.2020թ. Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է բողոք, որով վիճարկվել է ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար դերձակի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.07.2020թ. թիվ 5 որոշումը:

Նույն բողոքով «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ն ներկայացրել էր միջնորդություն ներգրավել ՍՊԸ-ին որպես երրորդ անձ՝ քննվող «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից 16.07.2020թ. ներկայացված ԳԲՔԱ-ՆԳ-2020/63 բողոքով:

«Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի կողմից բողոքներ քննող անձին ներկայացվել է նաև ինքնաբացարկի միջնորդություն:

Ինքնաբացարկի միջնորդությամբ որոշում կայացնելու նպատակով հրավիրված նիստը բողոքներ քննող անձի կողմից հետաձգվել է և նշանակվել 30.07.2020թ.:

Հարգելի պարոն Ներսիսյան, խնդրում եմ հաշվի առնել այն հանգամանքը, որ մինչև 30.07.2020թ. հրավիրված նիստը «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ն տեղյակ չէ իր կողմից հայտնած ինքնաբացարկի միջնորդության վերաբերյալ Ձեր դիրքորոշմանը, իսկ վերոհիշյալ միջնորդության վերաբերյալ բողոքներ քննող անձի կայացվելիք որոշման բովանդակությունը էական նշանակություն ունի «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի կողմից 16.07.2020թ. «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի բողոքի վերաբերյալ դիրքորոշում նախապատրաստելու և հայտնելու համար:

Բացի այդ, տեղեկացնում ենք, որ «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ին, որպես 3-րդ անձ ներգրավելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից չեն տրամադրվել «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից բողոքին կից ներկայացված 62 թերթ փաստաթղթերը՝ դրանց ծանոթանալու և դրանց վերաբերյալ հիմնավոր առարկություններ ներկայացնելու նպատակով:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի կողմից տվյալ բողոքով իր շահերը արդյունավետ պաշտպանելու անհրաժեշտությունը, բողոքներ քննող անձին խնդրում եմ.

1. «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ին էլեկտրոնային եղանակով տրամադրել «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից բողոքին կից ներկայացված բոլոր փաստաթղթերը:

2. Ինքնաբացարկի միջնորդության վերաբերյալ որոշում կայացնելուց հետո՝ վերոհիշյալ որոշման պատճենը տրամադրել «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ին:

3. Ինքնաբացարկի միջնորդության վերաբերյալ որոշումը հրապարակելուց հետո՝ հետաձգել 30.07.2020թ. նիստը և նշանակել մեկ այլ հերթի՝ «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ին տրամադրելով հնարավորություն հայտնել դիրքորոշում «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ՝ ապահովելով բողոքի լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննությունը»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 30.07.2020թ. ժամը 10:00-ին նիստի ընթացքում անդրադառնելով «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի կողմից 23.07.2020թ. ներկայացված ինքնաբացարկի միջնորդությանը և բացարկի միջնորդության լրացմանը մերժում է միջնորդությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը չի կարող քննել բողոքը, եթե պարզվում է, որ բողոքարկման գործընթացում ներգրավված է իր հիմնադրած կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպություն, կամ տվյալ բողոքարկման ընթացակարգում ներգրավված է իրեն մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձ (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր, ինչպես նաև ամուսնու ծնող, երեխա, եղբայր կամ քույր) կամ այդ անձի հիմնադրած կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպություն: Եթե առկա է սույն մասով նախատեսված պայմանը, ապա տվյալ բողոքի քննման և որոշման կայացման առնչությամբ սույն մասով սահմանված շահերի բախում ունեցող գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ինքնաբացարկ է հայտնում տվյալ բողոքի քննումից: Յուրաքանչյուր բողոքի քննման ժամանակ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ստորագրում է շահերի բախման բացակայության մասին հայտարարություն, որը բողոքի վերաբերյալ կայացված որոշման հետ մեկտեղ հրապարակվում է տեղեկագրում:

Ելնելով վերոգրյալից և մանրամասն ուսումնասիրելով «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ինքնաբացարկ հայտնելու վերաբերյալ միջնորդությունը՝ գտնում եմ, որ «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի կողմից վկայակոչված հիմքերից որևէ մեկը չի առնչվում

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասով ինքնաբացարկ հայտնելու համար սահմանված պահանջներին:

Ինչպես նաև անդրադառնալով «ԳԵՎԳՐՈՒՊ» և «Մետաքսկոմբինատ» ՍՊ ընկերությունների 29.07.2020թ. գրություններով ներկայացված պահանջներին՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հայտնում է, որ միջնորդության մերժման վերաբերյալ առանձին ակտի ձևով որոշում չի կայացնում, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նման պարտականություն չի կրում, բոլոր ցանկացողները նիստի ընթացքին կարող են առցանց հետևել e-gov.am կայքի միջոցով, իսկ նիստի ողջ ընթացքի վերաբերյալ տեսանյութը ներբեռնվում է youtube.com կայքում և այն կարող են տեսնել որոնման մասում նշելով ընթացակարգի ծածկագիրը:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում նշել, որ «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից բողոքին կից ներկայացված բոլոր փաստաթղթերը 30.07.2020թ. էլ. եղանակով ուղարկվել են «Մետաքսկոմբինատ» և «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊ ընկերություններին և ընկերություններին տրամադրվել է հնարավորություն ծանոթանալու ներկայացված բողոքին՝ հաջորդ նիստը 04.08.2020թ. նշանակելով:

«ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից 10.08.2020թ. ժամը 22:07-ին ofeli.kirakosyan92@gmail.com էլ. փոստին ուղարկվել է «Համանման բողոք» վերտառությամբ փաստաթուղթ: Սույն մասով հարկ եմ համարում հայտնել հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ ***մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք...:***

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝

2. ***Բողոքը ներկայացվում է Լիազորված մարմին (այսուհետ՝ նաև Նախարարություն) գրավոր՝ Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Մելիք-Ադամյան 1 հասցեով կամ դրա բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը secretariat@minfin.am հասցեով էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով:***

3. ***Ստացված բողոքը նախարարության քարտուղարության (այսուհետ՝ քարտուղարություն) կողմից մուտքագրվում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ (այսուհետ՝ համակարգ) և նույն օրը համակարգի միջոցով տրամադրվում է Անձին՝..***

Համանման բողոքը ներկայացվում է նույն կարգով, ինչ բողոքը, մինչդեռ 11.08.2020թ. ժամը 10:00-ի դրությամբ, այն է՝ ***մինչև բողոքի քննության արդյունքներով հրավիրված որոշման հրապարակման նիստը, նախարարության քարտուղարության կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին Համանման բողոք չի մակագրվել:***

Այնուամենայնիվ, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից այն չի անտեսվել և բողոքի քննության ընթացքում դիտվել է որպես երրորդ կողմի կողմից ներկայացված դիրքորոշում:

Նշված դիրքորոշմամբ «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է քննվում «Արցախի կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից 16.06.2020թ. ներկայացված ԳԲՔԱ-ՆԴ-2020/63 բողոքը, որով վիճակվել է ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար դերձակի ծառայությունների ձեռք բերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.07.2020 թ. թիվ 5 որոշումը:

Համաձայն գնահատվող հանձնաժողովի 30.03.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության ՀՀ կետի՝ մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերն առկա են, բացառությամբ «Արցախի կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի հայտի, որում բացակայում է մասնակցի կողմից ներկայացվելիք փաստաթղթերը, այդ թվում գնային առաջարկը, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017 թ. 526-Ն որոշմամբ հաստատված 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները, որոշեց «Արցախի կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի հայտը գնահատել անբավարար /անհամապատասխան/ սույն ընթացակարգի հրավերի պահանջներին և մերժել նրա հայտը:

Նույն արձանագրության 4.1 կետի համաձայն՝ «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն և «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել են 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից հայտարարվել է անգործությյան ժամկետ:

Հայտարարված անգործության ժամանակահատվածում «Արցախի կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ն 17.04.2020թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնել բողոք, որով վիճակվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ–ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ՓԲԸ–ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումները և խնդրել բողոքներ քննող անձին պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ–ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Դերձակի ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Արցախի կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ.Ներսիսյանի կողմից 10.06.2020թ. կայացած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշմամբ բավարարվել է «Արցախի կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից 17.04.2020թ. ներկայացված բողոքը և որոշվել է պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԳ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. Դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար դերձակի ծառայությունների ձեռքբերման նպատակով՝ հայտարարված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Արցախի կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

2. Քննության առնել ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ փորձագետի եզրակացությամբ տրամադրված «Արցախի կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից Ընթացակարգին հայտ ներկայացնելու նպատակով հայտերի նախապատրաստման համակարգ մուտքագրված՝ «դիմում հայտարարություն» թիվ 1 հավելվածը, «գնային առաջարկ» թիվ 2 հավելվածը և թիվ ԱԲԵՆ/20/48-23 երաշխիքի լուսապատճենը:

Գ.Ներսիսյանի կողմից 10.06.2020թ. կայացրած թիվ թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշման հիման վրա Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից դադարեցվել է «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին և «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ին 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող ճանաչելու մասին որոշումը և հաղթող մասնակից է ճանաչվել «Արցախի կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ն:

«Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ն 18.06.2020թ. հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի՝ թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, նախագահությամբ դատավոր Ս. Սահակյանի, 23.06.2020 թ. որոշմամբ դատավոր Ս. Սահակյանը բավարարել է «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը և կասեցրել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ.Ներսիսյանի 10.06.2020թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշման կատարումը՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը: Նույն որոշմամբ արգելվել է ՀՀ պաշտպանության նախարարությանը կատարել որևէ գործողություն՝ ուղղված ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ.Ներսիսյանի 10.06.2020 թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշման կատարմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով՝ կազմակերպում.

2) Պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) Ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպության կամ քաղաքացիություն չունեցող անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպության կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոհիշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, փաստում ենք, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք

հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավոտ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, հարկ ենք համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ

իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

ՀՀ Սահմանադրական 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ և նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրական վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականցման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները /11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ/:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

Դատարանի իրավապարտադիր որոշմամբ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի 10.06.2020թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշման իրավաբանական ուժի կասեցումը/դադարեցումը նշանակել է, որ այլևս չի գործում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ.Ներսիսյանի 10.06.2020թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշումը՝ «Արցախի կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու վերացնելու:

Այսինքն՝ Դատարանի իրավապարտադիր որոշման արդյունքում այս պահին «Արցախի կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի հայտը այլևս չէր կարող

գնահատվել/դիտարկվել բավարար, ՓԲԸ-ն չէր կարող դիտարկվել որպես առաջին տեղ զբաղացնող/ընտրված մասնակից, քանի որ վերջինիս հայտը բավարար գնահատելու մասին ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ.Ներսիսյանի որոշման իրավաբանական ուժը կասեցված է:

Նման պայմաններում ստացվում է, որ գործում էր գնահատող հանձնաժողովի կայացրած որոշումները «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ին «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի, իսկ «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնի մասով հաղթող մասնակիցներ ճանաչելու և վերջիններիս հետ պայմանագիր կնքելու մասին որոշումները:

Փաստորեն, Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից ԵԴ/17845/02/20 քաղաքացիական գործով 23.06.2020թ. կայացրած «Հայցի ապահովման միջոցկիրառվելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» որոշման արդյունքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հետ էր վերադարձրել այն փուլ, երբ Մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից «Արցախի կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի հայտը մերժվել է և հաղթող մասնակից պետք է ճանաչվեր «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ն և «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն:

Նման պայմաններում ինքնին, գնահատող հանձնաժողովը պետք է առանց նոր անգործության ժամկետ հայտարարելու՝ պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացներ «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի և «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին, որի պարագայում «Արցախի կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ն այլևս հնարավորություն չէր ունենա ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոք ներկայացնելով և այս պարագայում մենք արդեն կունենայինք գործող և ուժի մեջ մտած պայմանագրեր:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրում եմ՝

Պարտավորեցնել՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.07.2020թ. թիվ 5 արձանագրության 3-րդ կետով «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ին և «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու մասին որոշումները»:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի 16.07.2020թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ պաշտպանության նախարարության 21.07.2020թ. գրությամբ հայտնած դիրքորոշումը, «Մետաքսկոմբինատ» և «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունների դիրքորոշումները, ինչպես նաև ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 20.07.2020թ. թիվ ԵԴ/17845/02/20 քաղաքացիական գործով կայացման պահից ուժի մեջ մտած որոշումը՝ կիրառված հայցի ապահովման միջոցը վերացնելու մասին, արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.07.2020թ. թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշման համար հիմք հանդիսացած ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի ԵԴ/17845/02/20 քաղաքացիական գործով հայցի ապահովման միջոցը նույն դատարանի 20.07.2020թ. թիվ ԵԴ/17845/02/20 որոշմամբ վերացվել է այն պատճառաբանությամբ, որ ի սկզբանե հայցի ապահովման միջոցը կիրառվել է ոչ իրավաչափորեն, հետևաբար այն որոշումը, որը կայացվել է արդեն իսկ վերացված հայցի ապահովման միջոցի հիմքով օբյեկտիվ իրականության մեջ չպետք է գոյություն ունենա՝ հիմքում ունենալով դատարանի 20.07.2020թ. թիվ ԵԴ/17845/02/20 որոշմամբ պատճառաբանությունն առ այն, որ հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքեր առկա չեն եղել:

Ընդհանրացնելով՝ կարելի է արձանագրել, որ արդեն իսկ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով վերացված հայցի ապահովման միջոցի կիրառման հիմքով կայացված որոշումը ևս ոչ իրավաչափ է և պետք է վերադառնալ այն ելակետին, որը գոյություն է ունեցել մինչև դատարանի կողմից 23.06.2020թ. հայցի ապահովման կիրառելը:

Ուստի հաշվի առնելով վերագրյալը, պետք է արձանագրել, որ նման պայմաններում վիճարկվող Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.07.2020թ. թիվ 5 արձանագրությունը ոչ իրավաչափ է և ենթակա է դադարեցման՝ հիմքում ունենալով վերոնշյալ պատճառաբանությունը:

Այսպիսով՝ վերոգրյալ հիմնավորումներով պայմանավորված՝ գտնում եմ, որ «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Միևնույն ժամանակ, հիմքում ունենալով դատարանի 20.07.2020թ. թիվ ԵԴ/17845/02/20 քաղաքացիական գործով կայացված և ուժի մեջ մտած որոշումը, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը «Մետաքսկոմբինատ» և «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունների

կողմից ներկայացված դիրքորոշումները՝ բողոքը մերժելու վերաբերյալ, համարում է անհիմն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից 16.07.2020թ. ներկայացված բողոքը բավարարել.

Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 14.07.2020թ. թիվ 5 արձանագրությունը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**